

Մրցույթի Հայտարարություն

ԱՀԳԹ-ն և ՀԾԾ-ն կազմակերպում են Հայաստանի փոփոխվող բնության մասին ցուցահանդես՝ «Լուսանկարչական արշավ Հայաստանի բնական գանձերի շուրջ» խորագրով

Ամերիկայի Հայկական գրադարանը և թանգարանը / ԱՀԳԹ/ և Հայաստան ծառատունկ ծրագիր / ՀԾԾ/ Հիմնադրամը իրար հետ համատեղ կազմակերպում են Հայաստանի բնությունը պատկերող լուսանկարների ցուցահանդես՝ ժյուրիի մասնակցությամբ: «Լուսանկարչական արշավ Հայաստանի բնական գանձերի շուրջ» խորագրով ցուցահանդեսը կտեղադրվի ԱՀԳԹ-ի ժամանակակից գեղարվեստի պատկերասրահում սեպտեմբերի 11-ից հոկտեմբերի 9-ը, 2008 թ: Ցուցահանդեսը կրնա նաև մեկ շաբաթյա այլ միջոցառումներին զուգընթաց, որոնք կլուսաբանեն ցուցահանդեսի թեման և կիրառվեն Հայաստանի բնապահպանական մարտահրավերների մասին:

Մասնակցության իրավասություն

Յուրաքնչյուր ոք, ով ունի Հայաստանի բնությունը պատկերող լուսանկար, կարող է դիմել՝ իր աշխատանքը ցուցահանդեսին ներկայացնելու և վաճառքի դնելու համար: Պարտադիր չէ, որ դիմորդներն ունենան Հայկական ծագում կամ լինեն արհեստավարժ լուսանկարիչներ. բավական է ապահովել լուսանկարի որակը:

Ձափանիչներ

Պատկերները պետք է համապատասխանեն ցուցահանդեսի թեմային և ներկայացնեն Հայաստանի էկոլոգիական ժառանգությունը: Պարտադիր չէ, որ պատկերները վերաբերեն արդի Հայաստանին, ընդունելի են Հայաստանի բնական գեղեցկությունը և ներկայիս Հայաստանի բնության մարտահրավերները պատկերող լուսանկարները: Լուսանկարները պետք է հանձնել թվային ձևաչափով, ընդունելի են նաև տպված լուսանկարներ /մի՛ հանձնեք բնօրինակները, նրանք վերադարձի ենթակա չեն/:

Դիմելու եղանակը

Դիմորդները պետք է ծանոթանան Հայցաթերթիկին և լրացնեն այն (այցելեք http://www.armeniatree.org/atpnews/news_press_031108.htm): Կարելի է ներկայացնել մինչև 20 թվային կամ տպված լուսանկար: Ներկայացված լուսանկարները պետք է անվանել/պիտակել և կցել դրանց գնացուցակը:

Յուզահանդեսի ներկայացմանն արժանացած լուսանկարները կտեղադրվեն 16 x 20 սովորական սև շրջանակների մեջ: Այլ չափերի շրջանակների մեջ իրենց լուսանկարները տեղադրել ցանկացողներն իրենք պետք է տրամադրեն շրջանակները և իրենք պետք է հետ վերցնեն լուսանկարները, եթե դրանք չվաճառվեն:

Դիմումները հանձնել հետևյալ հասցեով՝

ALMA's Contemporary Art Gallery
65 Main Street
Watertown, MA 02472

Դիմումներն ընդունվում են մինչև 2008 թ. մայիսի 30-ը, (ուրբաթ):

Աշխատանքների ընդունում/ Գնահատման և ընտրության ընթացք

Ներկայացված աշխատանքների գնահատմանն ու ընտրությանը կմասնակցի ԱՀԳԹ-ի և ՀԾԾ-ի աշխատակազմերից բաղկացած հանձնաժողովը, ինչպես նաև ժյուրիի պատվավոր անդամ Ջուդի Էն Գոլդմանը /տե՛ս հայցաթերթիկը ժյուրիի անդամների մասին մանրամասն տեղեկությունների համար, www.armeniatree.org/ : Աշխատանքի գնահատման ժամանակ, հաշվի է առնվելու նկարների որակը և նրանց համապատասխանությունը ցուցահանդեսի թեմային ու առաքելությանը: Բացի այդ, ժյուրին մտադիր է ընտրել Հայաստանի բազմազան բնությունը պատկերող բազմաթիվ լուսանկարներ: Յուզահանդեսի համար կարող է ընրվել յուրաքանչյուր դիմորդի մաքսիմում երեք լուսանկար: Մրցույթով անցածներին կգանգահարեն մինչև 15 հունիսի, 2008: Նրանց կհրավիրեն մասնավոր բացման հանդիսավոր ընդունելությանը, որը տեղի կունենա 14 սեպտեմբերի, 2008:

Չուցահանդեսի պայմանները

Իրենց աշխատանքը ցուցադրելու հրավեր ստացած հեղինակները պետք է ստորագրեն ԱՀԳԹ-ի ժամանակակից գեղարվեստի պատկերասրահի պայմանների /քաղաքականության/ ձևը:

Դիմորդները պետք է խելամիտ գներ առաջարկեն լուսանկարների համար՝ նկատի ունենալով, որ ԱՀԳԹ-ն և ՀԾԾ-ն յուրաքանչյուր վաճառքից պահելու են 40 տոկոս տոկոսավարձ:

Լուսանկարների ցուցադրման կամ հայտի կանոնների վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար դիմեք՝

Christie Hardiman, ALMA's Public Relations Coordinator
E-mail: Christie@almainc.org
Phone: (617) 926-2562, ext. 4
Fax: (617) 926-0175

կամ այցելեք Հետևյալ ինտերնետային կայքերը՝

www.almainc.org կամ www.armeniatree.org

#

ԱՂԳԹ-ի մասին

Ամերիկայի Հայկական գրադարանը և թանգարանը / ԱՂԳԹ/ Հիմնադրվել է 1971 թ: ԱՂԳԹ-ի առաքելությունն է ներկայացնել և պահպանել Հայ ժողովրդի մշակույթը, պատմությունը, արվեստը և ներդրումը ամերիկացի և Հայ ժողովուրդների համար: Իր ստեղծումից ի վեր, ԱՂԳԹ-ի հավաքածուն Հարստացել է և ունի 27,000 ավելի գրքեր և 20,000 ավելի Հնություններ՝ դառնալով Հայկական մշակութային նմուշների ամենամեծ և ամենաբազմազան դարանը Հայաստանից դուրս:

Ժառանգական ունեցվածքի այս դարանը ոչ միայն հանդիսանում է որպես Հայագիտության Հետազոտության Հիմնական ռեսուրս, այլև պահպանում և ներկայացնում է Հայկական ժառանգությունը: 1988 թվականին ԱՂԳԹ-ն ձեռք է բերել 30,000 քառակուսի ֆուտ տարածք զբաղեցնող տարածք Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքում, ուր գտնվում է Հյուսիսային ԱՄՆ-ի ամենաՀին և ակտիվ Հայ Համայնքը: Տարածությունը զբաղեցնում են, ցուցասրահներ, գրադարանը, վարչարարական գրասենյակներ, նպատակային դահլիճը, կլիման կարգավորով պահոցներ և պահպանության լաբորատորիան:

ԱՂԳԹ-ն միակ անկախ Հայկական թանգարանն է սփյուռքում, որը ֆինանսավորվում է միայն անհատական նվիրատվությունների շնորհիվ: Ակտիվ հոգաբարձուների խորհուրդը և կամավորականները հավելում են թանգարանի աշխատակազմը: Թանգարանը և պատկերասրահը աշխատում են հազեցած ժամանակացույցով՝ ցուցահանդեսների Հերթափոխությամբ: Ի լրումն, թանգարանը հովանավորում է Հայաստանին վերաբերող դասախոսությունների և զեկույցների ծրագրեր: Գրադարանը Հիմնականում ծառայում է գիտական Հետազոտողներին ու Հայերի մասին ուսումնասիրություններ անող ստվարաթիվ Հանրությանը:

Թանգարանի և պատկերասրահի աշխատանքային ժամերն են՝ ուրբաթ և կիրակի՝ 13:00-17:00, շաբաթ՝ 10:00-14:00, հինգշաբթի՝ 18:00-21:00:

Գրադարանի աշխատանքային ժամերն են՝ 13:00-17:00:

Մուտք՝ Մուտքն ազատ է ԱՀԳԹ անդամների համար, չափահասների մուտքը վճարովի է՝ \$5, ուսանողների համար՝ \$2, 12 տարեկան և ավելի փոքր երեխաների համար մուտքն ազատ է:

ՀԾԾ-ի մասին

Առաքելության նկարագիրը

Հայաստան ծառատունկ ծրագիրը / ՀԾԾ/ (պաշտոնական անունն է «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ) Ուոթերթաուն և Երևան քաղաքներում տեղայնացված, շահույթ չհետապնդող ծրագիր է, որն իրականացնում է կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր՝ Հայաստանի աղքատ և անտառազուրկ գոտիներում և հայցում է ձեր աջակցությունը:

1994-ից սկսած ՀԾԾ-ն հսկայական աշխատանք է իրականացրել անապատացման դեմ պայքարում՝ գործելով կենսաբազմազան, սակայն առավել վտանգված Կովկասյան տարածաշրջանում: Ծրագրի ջանքերով տնկվել և վերականգնվել է 2,000,000-ից (2 մլն) ավելի ծառ: Ծառատունկի հետ կապված սեզոնային ծրագրերի շրջանակներում հարյուրավոր աշխատատեղեր են բացվել Հայաստանի բնակչության համար:

Հայաստան ծառատունկ ծրագիրը գումարներ է հայթհայթում անտառների վերականգնման համար՝ ջանալով նպաստել Հայաստանի տնտեսական և սոցիալական զարգացմանը: Մեր կողմից աճեցրած և տնկած ծառերը կենսական նշանակություն ունեն. դրանք մարդկանց ապահովում են սնունդով, փայտով, տնտեսական բարիքներով և տնտեսության աճի համար անհրաժեշտ այլ հնարավորություններով:

Մեր նպատակն է օգնել Հայ ժողովրդին ծառերի օգտագործման միջոցով բարելավելու իր կենսամակարդակը, ինչպես նաև պաշտպանել շրջակա միջավայրը: Այդ առաքելությունն իրագործելիս՝ մենք առաջնորդվում ենք հետևյալ խնդիրներով. աջակցել մարդկանց և, առաջին հերթին, չքավորներին հոգալու իրենց խնդիրները և կարիքները, ինչպես նաև պահպանել բնական էկոհամակարգը:

ՀԾԾ-ի երեք խոշոր ծրագրերն են.

- ա. անտառապատում և անտառվերականգնում, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացում և աղքատության նվազեցում;*
- բ. ծառատունկ քաղաքի ու գյուղերի տարածքներում;*
- գ. բնապահպանական կրթություն և շրջակա միջավայրի պաշտպանություն:*

Հայաստանում ՀԾԾ-ն ունի ութսուն աշխատակից, երեք ժամանակակից տնկարան: Երևանի մասնաճյուղը համագործակցում է գյուղի բնակչության հետ՝ ծառերի համար միկրո ձեռնարկությունների (տնամերձ տնկարաններ) ստեղծման շուրջ, հիմնում է կանաչ գոտիներ հանրային օգտագործման համար, վերականգնում է ոռոգացված անտառային հողերը անտառապատման միջոցով: Նոր անտառներ տնկելու նպատակով հիմնադրամը ժամանակավոր աշխատատեղեր է ստեղծում հարյուրավոր մարդկանց համար: